# ՀՀ Արարատի մարզպետի շնորհավորական ուղերձը վերջին զանգի կապակցությամբ

25.05.2012



Սիրելի շրջանավարտներ

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ դպրոցական ուսումնառության շրջանը ավարտելու առթիվ:

Տոնական այս օրը հիշարժան է բոլորիդ համար, դուք հրաժեշտ եք տալիս ձեր սիրելի դպրոցին, որը ձեզ համար եղել է գիտելիքների ձեռքբերման, աշխարհաճանաչման յուրօրինակ միջավայր: Հրաժեշտ եք տալիս ձեր ուսուցիչներին, որոնք ձեզ դաստիարակել և տվել են անհրաժեշտ գիտելիքներ, ձեր մեջ սերմանել արժանապատիվ ապրելու կամք և հավատ վաղվա օրվա նկատմամբ:

Իմ շնորհակալական խոսքն եմ հղում մեր պատվարժան մանկավարժներին, որոնք իրենց հետևողական աշխատանքով շրջանավարտներին ճանապարհում են կյանք, հաստատ համոզված լինելով, որ նրանք իրենց հնարավորություններն ու կարողությունները ի նպաստ են բերելու մեր հայրենիքի բարգավաճմանն ու հզորացմանը:

Կրկին շնորհավորելով բոլոր շրջանավարտներին՝ Վերջին զանգի կապակցությամբ, մաղթում եմ հաջողություններ, նպատակների իրականացում և ամենայն բարիք:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐՈՎ՝ Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ